# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 օգոստոսի 2026 թ. N 283-Ա

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 247-Ա ԵՎ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի N 254-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 3-րդ կետով, հաշվի առնելով ՀՀ Կադաստրի կոմիտեի՝ Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին Կ-26082026-10-0120 և Կ-26082026-10-0086 որոշումները՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 31-ի «Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 2-րդ շենքի հարևանությամբ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված շինության մասը և հարթակը համայնքի սեփականություն համարելու, օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին» N 247-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝ որոշման 1-ին կետում «օրինական» բառից հետո ավելացնել «, փոփոխված համարել հողամասի գործառնական նշանակությունը որպես հասարակական կառուցապատման հողամասի» բառերը:

2. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 3-ի «Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Մ. Ստեփանյան փողոցի 9-րդ շենքին հարակից տեղանքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված շինությունը համայնքի սեփականություն համարելու, օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին» N 254-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝ որոշման 1-ին կետում «օրինական» բառից հետո ավելացնել «, փոփոխված համարել հողամասի գործառնական նշանակությունը որպես հասարակական կառուցապատման հողամասի» բառերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակման օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 27
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 օգոստոսի 2026 թ. N 284-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 1-ին և 2.1-ին մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով տեղական ինքնակառավարման մարմինների 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումներիժամանակացույցի 11-րդ կետի պահանջը՝ ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու՝ 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք հերթական ընտրությունների անցկացման համար սահմանել հետևյալ տեղամասային կենտրոնները՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝

1) սույն որոշման մասին տեղեկացնել լիազոր մարմնին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին,

2) մինչև 2026 թվականի սեպտեմբերի 12-ը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել տեղամասային կենտրոնների ցանկը՝ նշելով տեղամասային կենտրոնների գտնվելու վայրը, ինչպես նաև տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների բնութագրերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 27
Ջերմուկ

*Հավելված*
*Ջերմուկ համայնքի ղեկավարի 2026*
*թվականի օգոստոսի 27-ի N 284–Ա որոշման*

# ՑԱՆԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ

| Մարզ | Համայնք | Բնակավայր | Հասցե |
|---|---|---|---|
| Վայոց ձոր | Ջերմուկ | Ջերմուկ քաղաք | Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոցի շենք, ք.Ջերմուկ, Շահումյան փողոց, շենք 7 |
| Վայոց ձոր | Ջերմուկ | Ջերմուկ քաղաք | «Ձատիկ» մանկապարտեզի շենք, ք.Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս, 2-րդ փողոց, շենք 3 |
| Վայոց ձոր | Ջերմուկ | Ջերմուկ քաղաք | Ջերմուկի Կրթահամալիրի շենք, ք.Ջերմուկ, Մ. Ստեփանյան փողոց, շենք 16 |
| Վայոց ձոր | Ջերմուկ | Կեչուտ գյուղ | Մշակույթի տան շենք, գ. Կեչուտ, 8-րդ փողոց, շենք 13 |
| Վայոց ձոր | Ջերմուկ | Գնդեվազ գյուղ | Մշակույթի տան շենք,, գ. Գնդեվազ, 8-րդ փողոց, շենք 1 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2026 թ. N 285-Ա

**ԱՐՍԵՆ ՔԱՋԻԿԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ N 22/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու ու Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Արսեն Քաջիկի Բարսեղյանի դիմումը (մտից՝ N 1459, 24.08.2026 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Արսեն Քաջիկի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2026 թվականի օգոստոսի 17-ի N 17082026-10-0012 վկայական) Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի N 22/6 հասցեում գտնվող 36 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես հասարակական կառուցապատման հողամասի:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Ջերմուկ համայնքի ավագանու կողմից հաստատվելու պահից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 28
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2026 թ. N 286-Ա

**ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026 թվականի հուլիսի 3-ին ընդունված ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-404-Ն և ««Համայնքային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-393-Ն օրենքները՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության բոլոր պաշտոնների անձնագրերում «աշխատակազմի քարտուղար» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «աշխատակազմի ղեկավար» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի օգոստոսի 30-ին:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 28
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2026 թ. N 287-Ա

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂԻ Կ. ԱՂԱԲԵԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Անդրանիկ Հապետնակի Թադևոսյանի դիմումը (մտից՝ 2026 թվականի օգոստոսի 26-ի N 1493)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի Կ. Աղաբեկյանի փողոցի վրա գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 37,8 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 37,8 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 31,1 քմ) ավտոտնակը (այսուհետ՝ շինություն) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2026ZZWX4V:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

*Ջերմուկ համայնք, գ. Կեչուտ, Կ. Աղաբեկյանի փողոց N 5/2:*

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Կեչուտ գյուղի բնակիչ Անդրանիկ Հապետնակի Թադևոսյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 31
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2026 թ. N 288-Ա

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի բնակիչ Ն. Ս. Արշակյանի դիմումը (մտից N 1296, 28.07.2026 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 6-րդ փողոցի վրա գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 42 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 42 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 38,1 քմ) ավտոտնակը՝ (այսուհետ՝ շինություն) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2026KATSQ6:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

*Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս, 6-րդ փողոց N 12:*

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Նաիրա Սամվելի Արշակյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 31
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2026 թ. N 289-Ա

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի բնակիչ Ս. Վ. Արշակյանի դիմումը (մտից N 1295, 28.07.2026 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 24,7 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 24,7 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 21,3 քմ) ավտոտնակը՝ (այսուհետ՝ շինություն) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2026UR4CQK:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

*Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս N 14/13:*

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Սամվել Վանյայի Արշակյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 31
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2026 թ. N 290-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 27-Ն հրամանով հաստատված կարգի 15-րդ և 176-րդ կետերով՝ ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացնել մրցույթներ.

*1) աշխատակազմի գլխավոր մասնագետ (պաշտոնի ծածկագիրը՝ 2.3-2)*

*2) սոցիալական աջակցության, առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 3.1-11)*

*3) սոցիալական աջակցության, առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի երկրորդ կարգի մասնագետ (պաշտոնի ծածկագիր՝ 3.3-1)*

*4) աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (պաշտոնի ծածկագիր՝ 3.2-1)*

2. Սույն որոշման առաջին կետում նշված մրցույթների օր նշանակել 2026 թվականի հոկտեմբերի 1-ը:

3. Հանձնարարել աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն որոշման առաջին կետում նշված մրցույթների անցկացման մասին հայտարարությունների հրապարակումը և նախապատրաստական աշխատանքների իրականացումը: Հայտարարությունների տեքստերը՝ համաձայն հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 31
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2026 թ. N 291-Ա

### ԷԴԳԱՐ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 23.1-ին կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշման, հաշվի առնելով Էդգար Ղազարյանի՝ 2026 թվականի հուլիսի 31-ին էլեկտրոնային հարթակում մուտքագրված ՀՆ/5373-26 դիմումը (մտից՝ 2026 թվականի օգոստոսի 20-ի N 1424) և «ՍՏ ԱՐՏ» ՍՊ ընկերության Ե-3357/2026 երաշխավորագիրը՝ ***որոշում եմ՝***

1. Համաձայնություն տալ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2026 թվականի հուլիսի 9-ին տրված N ՎՋ 3357/2026 տեխնիկական պայմանի ուղեգծով հետագիծ-նախագծային փաստաթղթերին և Ջերմուկ համայնքի բնակիչ Էդգար Ղազարյանին տրամադրել Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 6-րդ փողոցի N 6 հասցեում գտնվող սեփական ավտոտնակում արտաքին ջրամատակարարման աշխատանքներ կատարելու շինարարության թույլտվություն:

:

2. Էդգար Ղազարյանը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին վճարել 3000 (երեք հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Շինարարական աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է տեղեկացնել «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակեր- պությանը, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Վայոց ձորի ճանապարհային ոստիկանությանը և մյուս շահագրգիռ կազմակերպություններին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդգար Ղազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 31
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2026 թ. N 292-Ա

## «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, հաշվի առնելով Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյանի՝ էլեկտրոնային հարթակով ս/թ օգոստոսի 31-ին ներկայացրած ՇԹԴ/705/22484-26 դիմումը (մտից՝ 2026 թվականի օգոստոսի 31-ի N 1523)՝ ***որոշում եմ՝***

1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին տրամադրել Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասում մարզախաղահրապարակի կառուցման շինարարության թույլտվություն:

2. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 31
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2026 թ. N 293-Ա

## «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, հաշվի առնելով Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյանի՝ էլեկտրոնային հարթակով ս/թ օգոստոսի 31-ին ներկայացրած ՇԹԴ/705/22489-26 դիմումը (մտից՝ 2026 թվականի օգոստոսի 31-ի N 1522)՝ ***որոշում եմ՝***

1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին տրամադրել Ջերմուկ համայնքի քաղաքային ճոպանուղու աստիճանավանդակի տանիքաածածկի կառուցման շինարարության թույլտվություն:

2. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 31
Ջերմուկ